ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

արտադրական գործունեությունը կասեցնելու մասին որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

24 մայիսի 2018 թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Իշխան Կարապետյանս, ուսումնասիրելով անհատ ձեռնարկատեր Արման Բաբայանի վերաբերյալ հարուցված վարչական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պետի 2018 թվականի ապրիլի 5-ի N 179-18 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Արման Բաբայանի հացի արտադրամասում իրականացրած ստուգման արդյունքում պարզվել է, որ արտադրամասում չեն պահվում սանիտարահիգիենիկ նորմերը.

- Հացի արտադրամասը չի պահվում մաքուր, նորոգ և պատշաճ վիճակում.
- Բոլոր սենքերը տեղակայված են այնպես, որ չի պահպանվում հոսքայնությունը. Հումքի, պատրաստի սննդամթրրքի, անձնակազմի և հաճախորդների հանդիպակածց ուղիների և խաչվելու բացառումը.
- Կենցաղային հատվածները չեն համապատասխանում հիգիենայի պահանջներին.
- Ապահովված չէ կենցաղային տարածքներով/սանհանգույց՝ ձեռքերի լվացման և ախտահանման համար չկա լվացարաններ օճառով, էլէկտրաչորացուցիչներով և /կամ/ սրբիչով, ախտահանիչ լուծույթով,կախիչներով,հանդերձարան,որտեղ հագուստը. սանիտարական հագուստը և կոշիկները պահվում են առանձին.
- Փաթեթավորման գործընթացները չեն կատարվում սննդամթերքի աղտոտումը բացառող պայմաններում և հանդիսանում են սննդամթերքի աղտոտման աղբյուր.
- Հումքը և մյուս բաղադրիչները, և վերջնական արտադրանքը, որոնցում հնարավոր է ախտածին մանրէների բազմացում կամ թունավոր նյութերի առաջացում, չեն պահվում դրանց առաջացումը կամ բազմացումը բացառող խոնավության և ջերմային պայմաններում.
- Հումքը և մյուս բաղադրիչները և վերջնական արտադրանքը չեն պահվում դրանց փչացումը և աղտոտումը կանխարգելող պայմաններում:

Խախտվել է ՀՀ կառավարության 2011թ-ի հունվարի 20-ի «Սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 34-Ն որոշման հավելվածի 23-րդ, 25-րդ, 26-րդ, 57-րդ, 58-րդ, 60-րդ, 65-րդ կետերի պահանջները:

Սույն թվականի մայիսի 21-ին անհատ ձեռնարկատեր Արման Բաբայանը ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն հայտարարություն է ներկայացրել այն մասին, որ ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով հնարավորություն չի ունեցել ավարտին հասցնել շինարարարկան աշխատանքներն և վերացնել խախտումները: Ուստի խնդրում է երկարաձգել «Արտադրական գործունեությունը կասեցնելու մասին» որոշման ժամկետը մինչև 2018 թվականի հունիսի 25-ը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2018 թվականի ապրիլի 16-ի՝ «Արտադրական գործունեությունը կասեցնելու մասին» որոշման 3-րդ կետում «2018թ մայիսի 16-ը» բառերը փոխարինել «2018թ հունիսի 25-ը» բառերով, իսկ 4-րդ կետում «2018թ մայիսի 18-ը» բառերը փոխարինել «2018թ հունիսի 27-ը» բառերով:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ ????? ??????????

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.